

**Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի ելույթը Վանաձորի
Տեխնոպարկի բացման առիթով
29.10.2016թ.**

Հայաստանի Հանրապետության մեծարգո Նախագահ պարոն Սերժ Սարգսյան, հարգելի գործընկերներ, բարեկամներ.

Տասնամյակներ շարունակ ավտոմատացման, սարքաշինության, մեքենաշինության և քիմիական ոլորտներում գիտական արդյունաբերական մեծ ներուժ ունեցող Վանաձորը, որ անբարենպաստ կացության մեջ էր հայտնվել, այսօր, Տեխնոլոգիական կենտրոնի իրողությամբ, իր գիտական տարեգրության մեջ նոր ու նշանակալի էջ է բացում:

Երկու տարի առաջ, կառավարության որոշմամբ, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը ստանձնեց Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի գլխավոր օպերատորի պարտականությունները: Ծրագիրն ուղղված էր նպաստելու Լոռու մարզկենտրոնում ժամանակակից գիտելիքահեն և ինովացիոն ենթակառուցվածքներով հագեցած տեխնոլոգիական կենտրոնի ստեղծմանը, օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, որակյալ տեխնոլոգիական մասնագետների պատրաստմանն ու վերապատրաստմանը, ինչպես նաև՝ մարզի սկսնակ ընկերություններին և անհատ ձեռնարկատերերին բիզնես աջակցության ու խորհրդատվության տրամադրմանը:

Մեծարգո պարոն Նախագահ

Ձեր հանձնարարությամբ սկսված այս գործի հենց սկզբում՝ վերարժևորելով մեր գիտական ներուժի ստեղծագործական կարողությունները, հավատալով նպատակների իրատեսությանը մենք հավակնեցինք շրջադարձային քայլ կատարել՝ Վանաձորը վերածելով ժամանակակից, նորամուծական ենթակառուցվածքներով հագեցած տեխնոլոգիական գոտու:

Այստեղ ներկայացված կլինեն բարձր տեխնոլոգիաներ կիրառող կազմակերպություններ, խոշոր կրթօջախներ ու գիտահետազոտական կենտրոններ:

Կենտրոնն էական նշանակություն կունենա գործարար և ներդրումային միջավայրի բարելավման, փոքր և միջին բիզնեսի խթանման, նոր աշխատատեղերի ստեղծման և Վանաձորի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման գործում:

Ստեղծված հնարավորությունները հանրապետությունում կխթանեն նորարարությունների զարգացումը, կնպաստեն տեխնոլոգիական ընկերություններին՝ զգալիորեն արագացնելու նոր արտադրանքների մուտքը շուկա: Արդեն իսկ շուրջ 150 ընկերությունների, գյուտարարների և անհատ ձեռներեցների տրամադրվել են բիզնես աջակցության և խորհրդատվական ծառայություններ: Կենտրոնի գործունեության արդյունքում, մոտ ապագայում կծնավորվի առնվազն

150 ուղղակի և 1000 անուղղակի աշխատատեղ: Տարեկան կպատրաստվի և կվերապատրաստվի 500 մասնագետ, աջակցություն կստանա 50 թիմ ու կազմակերպություն:

Մենք վստահ ենք, որ Վանաձորի տեխնոպարկը զգալի դերակատարություն է ունենալու ոչ միայն Լոռու մարզում, այլև մեր երկրում տեխնոլոգիաների զարգացման, ձեռներեցության, ինչպես նաև՝ կրթական ժամանակակից մակարդակ ապահովող համակարգ և միջավայր ստեղծելու ուղղություններում, ուր կմեկտեղվեն բիզնեսն ու կրթությունը:

Ուզում եմ նաև զեկուցել, որ Ձեր հանձնարարականով, պարոն Նախագահ, ակտիվ ընթացք են ստացել Վանաձորում Թումո կենտրոնի ստեղծման աշխատանքները: Տեխնոկենտրոնի հետ մեկտեղ այն կդառնա Վանաձորի նոր շունչն ու կրթական, նորարական նախաձեռնությունների ապագան: Բարերարների ու Սիմոնյան հիմնադրամի հետ քննարկումների ավարտից հետո առաջիկայում արդեն ձեռնամուխ կլինենք Թումո Վանաձորի կառուցման մեկնարկին: Ընթացքի մեջ են նաև Թումանյանի տարածաշրջանում մեկ այլ նորարական կրթական ծրագրի՝ «Սմարթ» կենտրոնի կառուցման աշխատանքները մեր գործուն աջակցությամբ և «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի հովանավորությամբ:

Արևելյան իմաստնությունն ասում է՝ «Եթե քո երկրի ապագայի մեկ տարվա ծրագիր ես կազմում, ապա ցորեն ցանիր, եթե տասը տարվա, ապա՝ ծառ տնկիր, իսկ եթե դարերի՝ ուրեմն սերունդ դաստիարակիր»: Այսօր, դիտարկելով Լոռու մարզի զարգացման ծրագրերը, ամփոփելով ձեռքբերումներն ու հստակեցնելով ուղենիշերը, շփվելով լավատես և աշխատասեր լոռեցիների հետ՝ ներքին բավարարվածությամբ ու հպարտությամբ ենք նշում, որ Լոռիում մինչ այս իրականացվում էին տարվա ու տասնամյակի նախատեսումները, իսկ Տեխնոկենտրոնի և նորարական մյուս կենտրոնների ստեղծմամբ՝ մեր գիտական, արտադրական ներկայիս ներուժը և նրանց հերթափոխող սերունդը, կիրականացնեն հեռավոր ապագայի զարգացման փայլուն ծրագրեր:

Շնորհակալություն: